չկարեմք պատասխանել ինչ։ Նուրի Էֆէնտին ասէ · բարեկամք՝ միթէ թագաւորն սո՞ւտ գրեաց, եւ առաքողք հրովարտակիդ չգրեցի՞ն ինչ առ ձեզ · միթէ ուրացութեամբ ձերով կարծէք յետս ձգել հրամանի Արքային · զի Տէրութիւնն ոչ ասաց մեզ անսալ գրոյ Պատրիարքին Ցունաց և չգործել ընդդէմ հրամանի նորին, այլ զգուշանալ չգործել ընդդէմ հրամանի իւրոյ, և յետ պատուիրելոյ բանիւ բերանոյ՝ գրեաց նաեւ Խաթթի Շէրիֆ, և 'ի ձեռն պաշտօնէից հարկադրեաց գործադրել զգրուածս նորին։ Ցոյնք ասեն՝ եթէ անհրաժեշտ է գործադրութիւն հրովարտակաց, պարտ է գտանել զկորուստն մեր և յանձնել մեզ · յառաջ բերին աստանօր զՍ · Ցակոբ վանք Վրաց, ակնարկելով 'ի վանս Հայոց, զՍ · Փրկիչ և զՀրեշտակապետ այլովք անուամբք, որոց զարժանաւոր պատասխանիս ետուն Հայք, յառաջ բերելով զհրովարտակն Սէլիմայ եւ զերկար դատաստանն Կոստանդինուպօլսոյ և զհաճութիւն երկուց ազգաց սակս ընկերովի եւ սեփհական տեղեաց, զվերջանալն ատելութեանց և խռովութեանց · ուստի՞ ըստ իպեալ ասա վերստին 'ի դատ մտանել Կամիք ընդ մեզ հակառակ հրամանի Կայսեր, որոյ գործադրութեան փոյթ մեծ ունիմք 'ի ձեռն պաշտօնէից։ Դատաւորն դժկամակեալ ընդ բանս նոցա լռեցոյց զնոսա, և առաջի եդ Հայոց գնալ 'ի Ս · Աստուածածին երկիցս 'ի շաբաթու, և 'ի Բեթղեհէմ երկիցս 'ի տարւոջ գրով Ցունաց, և պատարագել 'ի վերայ արտաքին խորանաց։ Հայք ասեն՝ եթէ այդպէս առնել պարտ էր, ընդէ՞ր ետ ջնջել զարձանագրութիւն առաջին հրովարտակին իբր հակառակ · և վասն է՞ր գրեաց հրովարտակ վարիլ ըստ մտաց հրովարտակին Սէլիմայ, յորում յիշեալ են ամենայն բաժանորդ տեղիքն · յայտ է թէ հաւասար լինել Ցունաց։ Դատաւորն ասէ · դուք Հայքդ ըստ ախորժակաց ձերոց մեկնէք զգիրս, բայց Իլամն եւ Թագաւորն ցուցանէ 'ի բաժանորդ տեղիս ուխտ առնել, և ոչ զօրէնս կատարել։ Հայք ասեն՝ երկուց ազգաց հրովարտակքն 'ի մի և 'ի նոյն միտս գրեալ են, զի եթէ մեզ ուխտ՝ ապա և նոցա, առ այս ասէ՝ Ցոյնք 'ի բնէ ունէին · Հայք ասեն՝ այն էանց, այժմ ըստ մտաց հրովարտակին զոր ինչ առնեն Ցոյնք 'ի բաժանորդ տեղիս, զնոյն և մեք